



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<05>> սեպտեմբեր 2011թ.

N 301

Ք.Արմավիր

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասով, 1.12-րդ կետի <<բ>> ենթակետով, և հիմք ընդունելով Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետի 2011թվականի օգոստոսի 31-ի թիվ 15/0619 գրությունը, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության 20-ամյակի, արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակցի օրվա՝ սեպտեմբերի 4-ի կապակցությամբ Արմավիրի մարզային փրկարարական վարչության ծառայողական պարտականությունները բարեխղճորեն կատարած աշխատակիցներին խրախուսելու նպատակով.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից հատկացնել 175 000 /մեկ հարյուր յոթանասունհինգ հազար/ դրամ, Արմավիրի մարզային փրկարարական վարչության թվով 7 աշխատակիցներին՝ համաձայն հավելվածի, յուրաքանչյուրին 25000 /քսանհինգ հազար/ դրամ:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին /Փ. Կարապետյան/ սահմանված կարգով իրականացնել գումարի վճարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության 20-ամյակի, արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակցի օրվա՝ սեպտեմբերի 4-ի կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի կողմից խրախուսման ներկայացվողների

ՑՈՒՑԱԿ

1. Գառնիկ Մկրտչյան - Արմավիրի մարզային փրկարարական վարչության փրկարարական ջոկատի ջոկի հրամանատար, փ/ծ ենթասպա
2. Արման Նիկոլյան- Արմավիրի մարզային փրկարարական վարչության փրկարարական ջոկատի ընդհա-նուր պրոֆիլի փրկարար, փ/ծ սերժանտ
3. Հովհաննես Սիմոնյան - Արմավիրի մարզային փրկարարական վարչության կրտսեր դիսպետչեր, փ/ծ սերժանտ
4. Արմեն Մինասյան - Արմավիրի մարզային փրկարարական վարչության Արմավիրի հրշեջ- փրկարարական ջոկատի հրշեջ, փ/ծ կրտսեր սերժանտ
5. Դավիթ Մովսիսյան - Արմավիրի մարզային փրկարարական վարչության Վաղարշապատի հրշեջ- փրկարարական ջոկատի հրշեջ, փ/ծ սերժանտ
6. Հովհաննես Կարապետյան - Արմավիրի մարզային փրկարարական վարչության Բաղրամյանի հրշեջ- փրկարարական ջոկատի հերթափոխի պետ, փ/ծ կրտսեր սերժանտ
7. Գոհարիկ Մկրտչյան - Արմավիրի մարզային փրկարարական վարչության օպերատիվ բաժնի գործավար

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Փ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ